

Ի. ԱՏԱԼԻԿ


---

ԲՈԼՇԵՎԻԶՄԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ  
ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ



ՀԱՄԿ(Բ)Կ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՍԱՆ ՁՈՒՐՁԸ





Պրոլետարիատը քունքը յերկրաբների, միացե՛ք.

ՅԿՊՀ

Ի. ԱՏՎԵԼԻՆ

ԱՐԴՅՈՒՆ է 1981 թ.

# ԲՈԼԵՎԵՎԻԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ



## ՀԱՄԿ(Բ)Կ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՃՈՒՐՁԸ

(«Правда», 1987 թ. 6 մայիսի)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եղ

|  |    |
|--|----|
| Բոլշևիզմի պատմության մի քանի հարցերի մասին . . . . . | 3  |
| Համկ(բ)կ պատմության ուսումնասիրման շուրջը . . . . .  | 21 |

A II  
6809


И. СТАЛИН  
О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ  
ИСТОРИИ БОЛЬШЕВИЗМА

К ИЗУЧЕНИЮ ИСТОРИИ ВКП(б)

Армпартиздат, Ереван, 1937 г.

ԲՈԼՇԵՎԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ  
ՄԱՍԻՆ

Նույնական „Пролетарская революция“ ժողովականիք խմբագրությանը



## Հարգելի՝ ընկերներ :

Վճռականորեն բողոքում եմ Սլուցկու «Բոլշևիկները դեր-մանական սոցիալ-դեմոկրատիայի մասին նրա նախապատերադ-մյան ճգնաժամի շրջանում» հարակուսակցական ու կիսատրոց-կիստական հոդվածը «Пролетарская революция» ժուռնալում (1930թ. № 6) վորպես դիսկուսիոն հոդված զետեղելու դեմ :

Սլուցկին պնդում է, թե Լենինը (բոլշևիկները) թերապնա-հատում եր դերմանական ու ընդհանրապես նախապատերազմյան սոցիալ-դեմոկրատիայի մեջ յեղած ցենտրիզմի վտանգը, այսին-քըն՝ թերագնահաճատում եր քողարկված ուղղառումիզմի վտանգը, ուղղառումիզմի հանդեպ հաշտվողականություն ցուցաբերելու վտանգը : Այլ կերպ ասած՝ ըստ Սլուցկու դուրս ե գալիս, վոր Լենինը (բոլշևիկները) անհաշտ պայքար չեր մղում ուղղառումիզ-մի դեմ, վորովհետեւ ցենտրիզմի թերապնահաճատումն ըստ բանի Եյության հրաժարումն և ուղղառումիզմի դեմ ծավալուն պայքար մղելուց : Այսպիսով դուրս ե գալիս, վոր Լենինը պատերազմին նախորդող ժամանակաշրջանում դեռևս իսկական բոլշևիկ չեր, վոր իմպերիալիստական պատերազմի ժամանակաշրջանում մի-այն, կում նույնիսկ այդ պատերազմի վերջերքին Լենինն իսկական բոլշևիկ դարձավ : Այսպես և պատմում իր հոդվածում Սլուցկին : Իսկ դուք, փոխանակ նշանակելու այս նորահայտ «պատմաբանին» վորպես զրպարտչի ու կեղծարարի, դիսկուսիայի յեք բանվում նրա հետ, նրան տրիբունա յեք տալիս : Զեմ կարող չբողոքել Սլուցկու հոդվածը վորպես դիսկուսիոն հոդված ձեր ժուռնալում զետեղելու դեմ, վորովհետեւ չի կարելի դիսկուսիայի առարկա զարձնել Լենինի բոլշևիկության հարցը, այն հարցը, թե Լենինն սկզբունքային անհաշտ պայքար մղում եր արդյոք ցենտրիզմի՝ վորպես ուղղառումիզմի վորոշ տեսակի՝ դեմ, թե պայքար չեր մղում, Լենինն իսկական բոլշևիկ եր, թե այլպի-սին չեր :

«Խմբագրության կողմից» արած ձեր հայտարարության մեջ, վոր Կենտկոմ և ուղարկվել հոկտեմբերի 20-ին, դուք ընդունում եք, վոր խմբագրությունը սխալ է թույլ տակե՝ գետեղելով Սլուցկու հոդվածը վորպես զիսկուսիոն հոդված։ Այդ, իհարկե, լավ է, չնայած, վոր խմբագրությանդ հայտարարությունը լույս է տեսնումք մեծ ուշացումով։ Բայց դուք ձեր հայտարարելով, թե «Խմբագրությունը քաղաքականապես ծայր աստիճանի ակտուալ ու անհրաժեշտ է համարում պղորբեմների այն ամբողջ խմբի հետագա մշակումը՝ «Պրոլետարականացեն ծայր աստիճանի ակտուալ ու անհրաժեշտ է համարում պղորբեմների այն ամբողջ խմբի հետագա մշակումը՝ «Պրոլետարականացական հետ»։ Այդ նշանակում է, վոր դուք մտադիր եք մարդկանց նորից դիսկուսիայի մեջ ներքաշելու այն հարցերի վերաբերմամբ, վորոնք բոլշևիզմի աքսիոմաներն են։ Այդ նշանակում է, վոր լենինի բոլշևիկության հարցը գույք ուղղում եք աքսիոմայից վերածել «հետագա մշակման» կարուտ մի պղորբեմի։ Ինչո՞ւ, ի՞նչ հիման վրա Բոլորին հայտնի յե, վոր լենինիզմը ձնայել, աճել ու ամրացել և անողոք պայքարում ամեն յերանդի ուղորտունիզմի դեմ, այդ միութեանտրեանիզմի դեմ։ Արևմուտքում (Մառոցի), ցենտրիզմի դեմ՝ մեղանում (Տրոցկի և ուրիշները)։ Այս չեն կարող ժխտել բոլշևիզմի մինչև անգամ ուղղակի թշնամիները։ Սա աքսիոմա յե։ Իսկ դուք մեզ քաշում եք դեպի հետ, փորձելով աքսիոման դարձնել «հետագա մշակման» յենթակա պրոբլեմ։ Ինչո՞ւ։ Ի՞նչ հիման վրա։ Գուցե բոլշևիզմի պատմությանն անծանոթ լինելո՞ւ պատճառով։ Գուցե ի սեր փտած լիբերալիզմի, վորպես վի Սլուցկիները և Տրոցկու այլ աշակերտները չկարողանան ասել, թե իրենց թերանը վակում են։ Բավարկան առարուինակ լիբերալիզմ։ Վոր կիրառմում է ի հաշիվ բոլշևիզմի կենսական շահերի...

Խմբագրությունը Սլուցկու հոդվածում խնկապես ի՞նչն և դիսկուսիոն քննարկման արժանի համարում։

1) Սլուցկին պնդում է, թե լենինը (բոլշևիկները) գիծ չեր վարում դեպի խղում, դեպի պառակտում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ուղորտունիստների հետ, մինչպատերագրան ժան ժամանակաշրջանին լիներները առարուինակ առարուինակ լիների հետ։ Գույք ուղղում եք դիսկուսիա մղել Սլուցկու այս

կիւստական թիեղիսի դիմ։ Բայց այստեղ ի՞նչ՝ գիտելուհին բան կա։ Մի՞թե պարզ չե, վոր Սլուցկին ուղղակի զրաբառում և Լենինին, բաշկեկներին։ Զրաբարտությունը հարկավոր և նշալակել, և վոչ թե գիտելուախայի առաջիկա գարձնել։

Ամեն մի բոլչեկիկ, յեթե նա խականի բոլչեկիկ է, գիտե, վոր դեռևս պատերազմից շատ առաջ, մոտավորապես 1903—1904 թվականներից, յերբ Ռուսաստանում ձեւավորվեց բոլչեկիկների խոմքը, և յերբ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ձախերն առաջին անգամ իրենց գոյցնեթյունն իմանալ տվին, — Լենինը գիծ եր վարում գեսլի խղում, գեսլի պարակտում ոպորտունիստների հետ թե՛ մեղանում, ուսւաստանյան սոցիալ-դեմոկրատիան կուսակցության մեջ, թե՛ այստեղ, Ա ինտերնացիոնալում, ճամանակորապես գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ՝ Ամեն մի բոլչեկի գիտե, վոր հենց այս պատճառով բոլչեկներն արդեն այն ժամանակ (1903—1905) Ա ինտերնացիոնալի ոպորտունիստների շարքերում «պարակտիչների» ու «կազմալուծիչների» պատվալոր հոչակ վաստակեցին։ Բայց ի՞նչ կարող եր անել Լենինը, ի՞նչ կարող ելին անել բոլչեկիկները, յեթե ձախ սոցիալ-դեմոկրատները Ա ինտերնացիոնալում և, ամենից առաջ, գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ, թույլ ու անզոր մի խումբ ելին, կազմակերպորեն չձեւալորիած, իդեոլոգիապես չկովկած մի խումբ, վորը «խղում», «պառակտում» բառը նույնիսկ վախենում եր արտասանել։ Հո չի՞ կարելի պահանջել, վորպեսզի Լենինը, վորպեսզի բոլչեկները Ռուսաստանից ձախերի փոխարին պառակտում սարքելին արևմտյան կուսակցություններում։ Ել յետ չեմ խոսում այն մասին, վոր կազմակերպական ու իդեոլոգիական թույլությունը ձախ սոց-գեմ։ բնորոշ գիծն եր վոչ միայն մինչպատերազմյան ժամանակաշրջանում։ Դա, այդ բացասական գիծը, ինչպես հայտնի յե, ձախերը պահպանեցին նաև հետապներազմյան ժամանակաշրջանում։ Բոլորին հայտնի յե գերմանական ձախ սոց-դեմ։ մասին որված գնահատականը Լենինի «Յունիուսի բրոցյուրի մասին»<sup>1</sup> հայտնի հոդվածում, վոր գրված է 1916 թվի հոկտեմբերին, այսինքն՝ պատերազմի սկզբից ավելի քան յերկու տարի անց, չորտեղ Լենինը, քննադատելով ձախ սոց-դեմ։ մի ամբողջ

1 Յունիուսը—մոզա Լուքսեմբուրգն և, ձախ սոց-դեմ։ Աֆեքտը գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ։

շաբք լրջագույն քաղաքական սխալները Գերմանիայում, խոսում  
ե քրոլը գերմանական ձավոերի քուլության մասին, վրանց բո-  
լոր կողմերից պատել ե կառցկիական կեղծավորության, պե-  
ղանատության, ոպորտոնիստների նկատմամբ «ունեցած բարե-  
կամասիրության» նողկալի ցանցը, վրատեղ նու խոսում և այն  
մասին, վոր «Յունիուսը լիովին չի ազատազրկել գերմանական,  
մինչև անգամ ձախ սոցիալ-դեմոկրատների, «միջավայրից», վո-  
րոնիք վախենում են պառակտումից, վախենում են հեղափոխական  
լոգունգները լրիվ մինչև վերջն ասելուց»:

Ա ինտերնացիոնալի բոլոր խմբավորումներից ոռւսական բոլ-  
շևկիներն այն ժամանակ միակ խմբավորումն եյին, վորն իր  
կազմակերպական փորձով ու իրենուդիական կովովածությամբ  
շնորհանակ եր ձեռնարկելու վորեւ լուրջ բան՝ ուղղակի խղման,  
պառակտման խմաստով՝ իրենց ովորտունիստների հետ իրենց  
ոռւսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի մեջ: Այ, յեթե Սլուցկի-  
ները փորձ անեյին մինչև անգամ վո՞չ թե ապացուցելու, այլ  
պարզապես յենթադրելու, թե Լենինն ու ոռւսական բոլշևիկները  
չեն ողտագործել իրենց ամբողջ հղորությունը, վորսկեազի կաղ-  
մակերպեն պառակտումն ովորտունիստների հետ (Պլեխանով,  
Մարտով, Դան) ու վոնդեն ցենտրիստներին (Տրոցկի ու Ռուս-  
տոսյան բլոկի այլ կողմնակիցներ), ապա այն ժամանակ կարելի  
կլիներ վիճել Լենինի բոլշևիկության մասին, բոլշևիկների բոլ-  
շևիզմի մասին: Բայց բանն ել հենց այն ե, վոր Սլուցկիները  
չեն համարձակվում մինչև անդամ ծալտուն հանել հոգուս այլ-  
պիսի վայրենի յենթադրության: Զեն համարձակվում, վորովհե-  
տեւ դիտեն, վոր ոռւսական բոլշևիկների կողմից ամեն յերանդի  
ովորտունիստների հետ կապերը խղելու համար կիրառված  
(1904—1912 թ. թ.) վճռական քաղաքականության ամենքին  
հայտնի փաստերն աղաղակում են այդպիսի յենթադրության  
դեմ: Զեն համարձակվում, վորովհետեւ դիտեն, վոր իրենք մյուս  
որն ևեթ անարդանքի սյունին կդամվին:

Բայց ահա մի հարց ոռւսական բոլշևիկները կարո՞ղ եյին  
արդյոք իրականացնել պառակտումն իրենց ովորտունիստների  
ու ցենտրիստ-հաշտվողականների հետ խմակերիալիստական  
պատերազմից շատ առաջ (1904—1912 թ. թ.)՝ դրա հետ մեկտեղ  
դիմ չվարելով դեպի խղումը, դիմ դեպի պառակտումը Ա ինտեր-  
նացիոնալի ովորտունիստների ու ցենտրիստների հետ: Ո՞վ կա-  
րող է կասկածել այն մասին, վոր ոռւսական բոլշևիկներն ովոր-

ոռունիստների ու ցենտրիստների նկատմամբ վարած իրենց քառ-զլաքականությունը համարում է յին քաղաքականության տիպար Արևմուտքի ձախերի համար : Ո՞վ կարող է կասկածել այն մա-սին, վոր ռուսական բոլշևիկներն Արևմուտքի ձախ սոց-ռդեմո-կրատներին, մասնավորապես գերմանական սոցիալ-դեմոկրատիա-յի ձախերին ամեն կերպ մղում եյին դեպի խղում, դեպի պա-ռակտում իրենց ուղղության խստների ու ցենտրիստների հետ : Եհ-նինի ու ռուսական բոլշևիկների մեղքը չե, յեթե Արևմուտքի ձախ սոց-ռդեմ . հասունացած դուրս չեկան այն բանի համար, վորպեսզի ռուսական բոլշևիկների հետքերով դնան :

2) Սլուցիին կշտամբում ե Ենինին ու բոլշևիկներին, վոր նրանք գերմանական սոց-ռդեմ . մեջ յեղած ձախերին չեյին ա-ջակցում վճռաբար ու անդառնալի կերպով, վոր նրանք վերջին-ներին պաշտպանում եյին լուրջ վերապահումներով միայն, վոր Փրակցիոն նկատառությունը նրանց խանդարում եյին մինչև մերջն աջակցելու ձախերին : Դուք ուղում եք դիմակուսիա մղել այս շառլատանական ու տեղովը կեղծ կշտամբանքի դեմ : Բայց այսուեղ իսկապես ի՞նչ դիմակուսիոն բան կա: Մի՛թե պարզ չե, վոր Սլուցիին այսուեղ մանելյուսմ ե և Ենինի ու բոլշևիկների դեմ ուղղված կեղծ կշտամբանքով աշխատում ե քողարկել Գեր-ժանիայի ձախերի դիմքի իսկական բացերը : Մի՛թե պարզ չե, վոր բոլշևիկները չեյին կարող աջակցել ձախերին գերմանիա-յում, վորոնք հենց մի գուուխ տատանվում եյին բոլշևիզմի ու մենշևիզմի միջև՝ առանց լուրջ վերապահումների, առանց նրանց սխալների լուրջ քննադատության, չդավանանելով բանվոր դա-սակարգին ու նրա հեղափոխությանը : Խարեբայական մանյովր-ները հարկավոր ե նշավակել, և վոչ թե դիմակուսիայի առարկա դարձնել :

Այո՛, բոլշևիկներն աջակցում եյին ձախ սոց-ռդեմ . Գերմա-նիայում միայն վորոշ լուրջ վերապահումներով՝ քննադատությունը նրանց կիսամենշենիցյան սխալները : Բայց սրա համար հարկավոր ե նրանց վողջունել և վոչ թե կշտամբել :

Կա՞ն մարդկի, վորոնք կասկածում են սրանում :

Դիմենք պատմության ամենից ալելի հարտնի փաստերին :

ա) 1903 թվին լուրջ տարածայնություններ դրսեորդվեցին Ռուսաստանի բոլշևիկների ու մենշևիկների միջև կուսակցության անդամության հարցի առթիվ : Կուսակցության անդամության մասին իրենց ձևակերպումով բոլշևիկներն ուղում

Եյին կաղմակերպական սահմ ստեղծել վոչ-պրոլետարական տարրերի՝ կուսակցության ներսը հորդելու դեմ։ Այդախոփ հորդման վտանգն այն ժամանակ ավելի քան ռեալ եր՝ ոռւսական հեղափոխության բուրժուազիմոկրատական բնույթի չնորհիվ։ Ռուսական մենշևիկները հարկառակ դիրք եյին պաշտպանում, վորը կուսակցության դաները լայնորեն բաց եր անում վոչ-պրոլետարական տարրերի առջև։ Քանի վոր ոռւսական հեղափոխության հարցերը կարեոր նշանակություն ունեցին համաշխարհային հեղափոխական շարժման համար, արևմտա-յելլուսպական սոցիալ-դեմոկրատները վճռեցին միջամտել դործին։ Միջամտեցին նաև Գերմանիայի ձախ սոցիալ-դեմոկրատները՝ Պարլուսն ու Ռոդա Լուքսեմբուրգը, ձախերի այն ժամանակվա լիդերները։ Յելի ի՞նչ։ Նրանք յերկուսն ել բոլշևիկներին դեմ արտահայտվեցին։ Ընդամենը բոլշևիկների հասցեյին մեղադրանք չպրավից, թե նրանք ուղարացենտրալիստական ու բանկիստական տենդենցիներ ունեն։ Հետագայում մենշևիկները վորդեղբեցին այդ դռեհիկ ու քաղքենիական եպիտեսներն ու տարածեցին ամբողջ աշխարհով մեկ։

(բ) 1905 թվին բոլշևիկների ու մենշևիկների միջև Ռուսաստանում տարածայնություններ ծալալիցին ոռւսական հեղափոխության բնույթի շուրջը։ Բոլշևիկները պաշտպանում եյին բանվոր դաստակարդի դաշինքի դաշտավարը դյուլացիության հետ՝ պրոլետարիատի հեղեմոնիայի պայմանով։ Բոլշևիկները ղնդում եյին, վոր դործը հարկավոր ե տանել դեպի պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան այն հաշվով, վրաբեազի բուրժուազիմոկրատական հեղափոխությունից անհապաղ անցում կատարվի դեպի սոցիալիստական հեղափոխությունը՝ առահովելով աջակցությունը դյուղի չքայլություն կողմէց։ Մենշևիկները Ռուսաստանում մերժում եյին բուրժուազիմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեղեմոնիայի դաշտավարը, լիբերալ բուրժուազիայի հետ համաձայնություն ունենալու քաղաքականությունը նրանք դերադասեցին բանվոր դաստակարդի՝ գյուղացիության հետ դաշինք ունենալու քաղաքականությունից, իսկ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական – դեմոկրատական դիկտատուրան հայտարարեցին հետադիմական բլանկիստական սխեմա, վորը հակասում ե բուրժուական հեղափոխության զարդացմանը։ Ի՞նչ պես վերաբերվեցին այս վեճերին դերմանական սոցիալ-դեմոկրատիայի ձախերը՝ Պարլուսն ու Ռոդա Լուքսեմբուրգը։ Նրանք

Հնարեցինք պերմանենտ հեղափոխության ուստոպիական ու կիսամենշնելյան սխեման (հեղափոխության մարքսյան սխեմայի այլանդակ պատկերումը), վորն ամբողջովին տողորոված եր բանվոր դասակարգի ու դյուլացիության դաշինքի քաղաքականության մենշնելյան ժխտումով, և այն հակառակեցին պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատիան դիկտատուրայի բոլշևիլյան սխեմային: Հետագայում Տրոցիկին (մասամբ ել Մարտովը) վարդեգրեց պերմանենտ հեղափոխության այս կիսամենշնելյան սխեման ու լենինիզմի դեմ պայքարելու գործիք դարձրեց:

Դ) Պատերազմին նախորդած ժամանակաշրջանում II ինտերնացիոնալի կուսակցություններում հրապարակ յեկավ, վորակեանմենասկտուալ հարցերից մեկը, աղդային-դաղութային հարցը, ճնշված աղդերի ու գաղութների հարցը, ճնշված աղդերի ու գաղութների աղատագրման հարցը, իմպերիալիզմի դեմ սրայքաբեկլու ուղիների հարցը, իմպերիալիզմի տապալման ուղիների հարցը: Պրոլետարական հեղափոխությունը ծավալելու և իմպերիալիզմը շրջապատելու շահերի տեսակետից՝ բոլշևիկներն առաջարկեցին ճնշված աղդերի ու գաղութների աղատագրական շարժման աղդերի ինքնորոշման բաղայի վրա աջակցելու քաղաքականություն ու զարգացրին առաջավոր յերկիրների պրոլետարական հեղափոխության և գաղութների ու ճնշված յերկիրների ժողովուրդների հեղափոխական-աղատագրական շարժման միջնեմիանական ճամկատ ստեղծելու սխեման: Բոլոր յերկիրների ու պորտունիստները, բոլոր յերկիրների սոցիալ-շուլինիստներն ու սոցիալ-իմպերիալիստները չհապաղեցին այս կապակցությամբ դիմումներու բոլշևիկների դեմ: Բոլշևիկներին հալածում ելին ինչպես կատաղած ճների: Այդ ժամանակ ի՞նչ դիրք բռնեցին ձախ սոց-դեմ. Արևմուտքում: Նրանք զարգացրին իմպերիալիզմի կիսամենշնելյան թեորիան, մերժեցին աղդերի ինքնորոշման սկզբանումքը նրա մարքսիստական ըմբռնմամբ (ընդհուպ մինչեւ սնջատումն ու ինքնուրույն պետություններ կազմելը), բացարկեցին (ՕԹՅՈՒ) զաղութների ու ճնշված յերկիրների աղատագրական շարժման լուրջ հեղափոխական նշանակության վերաբերյալ թեղիսը, բացարկեցին պրոլետարական հեղափոխության ու աղդային-աղատագրական շարժման միջնեմիանական ճամկատ ունենաւը հնարավորության վերաբերյալ և դիսը և այդ ամբողջ կիսամենշնելյան շփոթը, վոր պայքային-դաղութային հարցի կատա-

բյալ թերապնահատությունն եւ, հակադրեցին բոլչելիների մարք-սխառական սխեմային: Հայտնի յեւ, վոր հետո Տրոցկին վորդեղբեց այդ կիսամենշելիյան շփոթը և այն ողագործեց վորապես պայքարի գործիք լենինիզմի դեմ:

Սրանք են ձախ սոց-դեմ. բոլորին հայտնի սխալները Գերմանիայում:

Ել յես չեմ խոսում գերմանական ձախերի մյուս սխալների մասին, վոր քննադատութել են Լենինի համապատասխան հողված-ներում:

Չեմ խոսում նույնպես այն սխալների մասին, վոր նրանք թույլ են տվել բոլչելիների՝ Հոկտեմբերերյան հեղափոխության ժամանակաշրջանի քաղաքականությունը գնահատելիս:

Ինչը մասին են խոսում գերմանական ձախերի այս սխալները, վորոնք առնված են մինչպատերազմյան ժամանակաշրջանի պատմությունից, յեթե վոչ այն մասին, վոր ձախ սոց-դեմ., չնայած իրենց ձախությանը, դեռ չեն արտադրովել մենշելիյան բազմաթիվ:

Իհարկե, ձախերը Գերմանիայում ունեյին վոչ միայն լուրջ սխալներ: Նրանք իրենց անցյալում ունեն հեղափոխական խոչը ու լուրջ գործեր ևս: Յես նկատի ունեմ նրանց մատուցած մի ամբողջ շարք ծառայություններն ու նրանց մի ամբողջ շարք հեղափոխական յելույթները ներքին քաղաքականության ու մասնավորապես ընտրական պայքարի հարցերի առթիվ, պառլամենտական ու արտապառլամենտական պայքարի, ընդհանուր գործադրութիւն, պատերազմի, Ռուսաստանի 1905 թ. հեղափոխության և այլ հարցերի առթիվ: Բոլչելիներն ել հենց այս պատճառով եյին նրանց հետ վորպես ձախերի հետ հաշվի նատում ու աջակցում եյին նրանց, առաջ եյին մղում նրանց: Բայց սա չի վոչնչացնում ու չի կարող վոչնչացնել այն փաստը, վոր ձախ սոց-դեմ. Գերմանիայում դրա հետ մեկտեղ իրենց անցյալում ունեյին մի ամբողջ շարք ամենալուրջ քաղաքական ու թերիստական սխալներ, վոր նրանք դեռ չեյին աղատվել մենշելիյան բեռից ու այդ պատճառով կարիք ունեյին բոլչելիների կողմից ամենալուրջ քննադատության:

Այժմ ինքներդ դատեցեք, արդյոք Լենինն ու բոլչելիները կարո՞ղ եյին աջակցել Արևմուտքի ձախ սոց-դեմ. առանց լուրջ վերապահումների, առանց նրանց սխալների լուրջ ֆնադատության՝ չլավաճանելով բանվոր դասակարգի շահերին, չդավաճա-

նելով հեղափոխության շահերին, չդավաճանելով կռմունիզմին։  
Պարզ չե՞ արդյոք, վոր Սլուցկին, կշտամբելով Լենինին ու  
բոլշևիկներին այն բանի համար, ինչի առթիվ նա պետք է վոր  
վողջուներ նրանց, յեթե ինքը բոլշևիկ լիներ, —մերկացնում ե  
իսեն մինչև վերջը՝ վորակես կիսամենչեմիի, վորակես դիմակա-  
վորված տրոցկիստի։

Սլուցկին յենթալրություն ե անում, թե լենինն ու բոլշևիկ-  
ներն Արևմուտքի ձախերի մասին իրենց տված գնահատականում  
յեխում եյին իրենց Փրակցիոն նկատառումներից, թե, ասել ե,  
ոռուսական բոլշևիկները միջազդային հեղափոխության մեծ գոր-  
ծը զոհաբերում ենին իրենց Փրակցիայի շահերին։ Հաղիլ թե  
հարկ կա ապացուցելու, վոր այդպիսի յենթալրությունից ավելի  
գուեհիկ ու նողկալի վոչինչ չի կարող լինել։ Ավելի գուեհիկ վո-  
չինչ չի կարող լինել, վորովհետեւ մինչև անդամ մենչեմիների  
թվին պատկանող մերկասպարանոց գուեհկարաններն սկսում են  
հասկանալ, վոր ոռուսական հեղափոխությունը ոռուների մասնա-  
վոր գործը չե, վոր նա, ընդհակառակը, ամբողջ աշխարհի բան-  
վոր դասակարգի գործն ե, համաշխարհային պրոլետարական հե-  
ղափոխության գործը։ Ավելի նողկալի վոչինչ չի կարող լինել,  
վորովհետեւ մինչև անդամ II ինստերնացիոնալին պատկանող պրո-  
ֆեսոնիալ զրաբարտիչներն սկսում են հասկանալ, վոր բոլշևիկնե-  
րի հետեւղական ու մինչև վերջը հեղափոխական ինստերնացիո-  
նալիզմը պրոլետարական ինստերնացիոնալիզմի տիպար ե բոլոր  
յերկիրների բանվորների համար։

Այո՛, ոռուսական բոլշևիկներն առաջին պլանն եյին քաշում  
ոռուսական հեղափոխության արմատական հարցերն, ինչպիսիներն  
են՝ կուսակցության, գեպի բուրժուա-դեմոկրատական հեղափո-  
խությունը մարզսիստների ունենալիք վերաբերմունքի, բանվոր  
դասակարգի ու գյուղացիության դաշինքի, պրոլետարիատի հե-  
ղեմոնիայի, պառլամենտական ու արտապարամենտական պայ-  
քարի, ընդհանուր գործադրութի, բուրժուա-դեմոկրատական հե-  
ղափոխության՝ սոցիալիստականի վերաճելու, պրոլետարիատի  
գեկտատուրայի, իմպերիալիզմի, ազգերի ինքնորոշման, ձնշված  
ազգերի ու գաղութների աղատազրական շարժման, այդ շարժ-  
մանն աջակցելու քաղաքականության հարցերը և այլն։ Նրանք  
առաջ եյին քաշում այս հարցերը վորպես փորձաքար, վորի վրա  
ստուգում եյին ձախ սոցիալ-դեմոկրատների հեղափոխական ստո-

կունությունն Արևմուտքում : Արդյոք նրանք այդ բանն անելու իրավունք ունելի՞ն : Այո՛, ունելին : Վո՛չ միայն ունելին, այլև պարտավոր եյին այդ ձևով վարդել : Նրանք պարտավոր եյին այդ ձևով վարդել, վորովհետեւ այդ բոլոր հարցերը միաժամանակ համաշխարհային հեղափոխության արմատական հարցերն եյին, վորի խնդիրներին բոլչելիները յենթարկում եյին իրենց քաղաքականությունը, իրենց տակտիկան : Նրանք պարտավոր եյին այդ ձևով վարդել, վորովհետեւ միայն այդպիսի հարցերով կարելի յեր ինչպես հարկն և ստուգել լ ինտերնացիոնալի այս կամ այն խմբավորման հեղափոխականությունը : Հարց և ծառադրման մեջ վո՞րն և այստեղ ուստական բոլչելիների «Փրակցիոնականությունը» և ի՞նչ դործ ունեն այստեղ «Փրակցիոն» նկատառությունները :

Լենինը դեռևս 1902 թվին իր «Ի՞նչ անել» բառշյուրում դրում էր, վոր «պատմությունը մեր առաջ այժմ դրել ե մի մերձավորագույն խնդիր, վոր ամեն մի յերկրի պրոլետարիատի բոլոր մեր ձավագույն իննդիրներից ամենից ավելի հեղափոխական յեկարպական, այլև ասիական ուսակցիայի ամենակորպատվարի քանդումը, —ուստական պրոլետարիատին կդարձներ միջազգային հեղափոխական պրոլետարիատի ավանդարդը» : «Ի՞նչ անել» բառշյուրի լույս տեսնելու ժամանակից անցել ե 30 տարի : Վոչ վոք չի համարձակվի ժխտել, վոր անցքերն այդ ժամանակաշրջանում փայլուն կերպով հաստատեցին Լենինի խոսքերը : Բայց արդյոք սրանից չե՞ հետեւում, վոր ուստական հեղափոխությունը յեղել ե (և մնում ե) համաշխարհային հեղափոխության հանդուցակետը, վոր ուստական հեղափոխության արմատական հարցերը միաժամանակ հանդիսանում եյին (և այժմ ել հանդիսանում են) համաշխարհային հեղափոխության արմատական հարցերը :

Պարզ չե՞ արդյոք, վոր միմիայն այսպիսի արմատական հարցերով կարելի յեր իսկապես ստուգել ձախ ուղղ . հեղափոխականությունն Արևմուտքում :

Պարզ չե՞ արդյոք, վոր այն մարդիկ, վորոնք այս հարցերը քննության են առնում վորպես «Փրակցիոն» հարցեր, —մերկացնում են իրենց մինչեւ վերջը վորպես զոհեկարաններ ու վերասերվածներ :

3) Սլուցիին պնդում ե, թե դեռ չեն դանվել բավարար քա-

նաևով պաշտոնական վավերագրեր, վորոնք վկայելիս լինելին լենինի (բոլշևիկների) վճռական ու անհաջող պայքարի մասին ցենտրիզմի դեմ: Նա այս բյուրոկրատական թեղիսը գործ է ածում վորպես անժխտելի փաստարկ հոգում այն գրույթի, թե Անինը (բոլշևիկները), հետևարար, թերագնահատում եր Անտերնացիոնալում յեղած ցենտրիզմի վտանքը: Դուք հանձն եք առնում դիմումիս մղել այս ցնողաբանության դեմ, այս ժութեկական պատրվակաղործության (կրօնկօտեօրչեա) դեմ: Բայց խւկապես ի՞նչ դիմուսիոն բան կա այսաեղ: Մի՞թե այնպես ել պարզ չեն, վոր Սլուցկին վավերագրերի վերաբերյալ զրույցներով ջանում ե քողարկել իր այսպես կոչված՝ դիրքավորման վողորմելիությունն ու կեղծիքը:

Սլուցկին գոյություն ունեցող կուսակցական վավերագրերը բավական չեն համարում: Ինչո՞ւ, ի՞նչ հիման վրա: Մի՞թե Անտերնացիոնալի գծով, ինչպես նաև ոռւսաստանյան սոցիալ-գեմոկրատիայի ներկուսակցական պայքարի գծով յեղած բոլորին հայտնի վավերագրերը բավական չեն, վորպեսզի ամենայն պարզությամբ ցուցադրվի Լենինի ու բոլշևիկների հեղափոխական անհաշտությունն ուղղաբանների ու ցենտրիստների դեմ մղած նրանց պայքարում: Սլուցկին առհասարակ ծանո՞թ ե արդյոք այդ վավերագրերին: Ել ի՞նչ փաստաթղթեր են հարկավոր նրան:

Յենթագրենք, թե գտնվեն, բացի արդեն հայտնի վավերագրերից, մի կույտ այլ վավերագրեր, ասենք, բոլշևիկների բանաձևեր, վորոնք մի ավելորդ անդամ խոսում են ցենտրիզմի վոչընչացման անհրաժեշտության մասին: Արդյո՞ք այս նշանակում ե, վոր միմիայն թղթե վավերագրերի առկայությունը բավական ե, վորպեսզի ցուցադրենք բոլշևիկների խւկական հեղափոխականությունն ու խւկական անհաշտությունը ցենտրիզմի նկատմամբ: Ել ո՞վ, բացի անհուսալի բյուրոկրատներից, կարող ե վստահել միմիայն թղթե վավերագրերին: Ել ո՞վ, բացի արխիվային առնեաներից, չեն հասկանում, վոր կուսակցություններին ու լիդերներին հարկավոր ե ստուշել ամենից առաջ իրենց գործերով, և վոչ թե միայն իրենց դեկլարացիաներով: Պատմությունը քիչ սոցիալբաներ չեն ճանաչում, վորոնք պատրաստակամությամբ ստորագրում ենին ուղածդդ հեղափոխական բանաձևերը, վորպեսզի խուսադրվեն (օտպատայքա) ձանձրացնող քննադատներից: Բայց այդ դեռ չի նշանակում, թե նրանք այդ պանաձևերը կիրառում ենին կյանքում: Ապա՝ պատմությու-

Նը քիչ սոցիալիստներ չի ճանաչում, վորոնք փրփուրը բերաններին պահանջում եյին այլ յերկիրների բանվորական կուսակցություններից հեղափոխական ամենաթունդ գործողություններ քայց այդ գեռ չի նշանակում, թե նրանք իրենց սեփական կուսակցության մեջ կամ իրենց սեփական յերկրում փաս չեյին անում՝ իրենց ոսկորտունիստների հանդեպ, իրենց բուրժուազիայի հանդեղ: Արդյոք Լենինն ա՞յդ պատճառով չեր սովորեցնում մեզ հեղափոխական կուսակցությունները, Հոսանքները, լիդերներին ստուգել վո՛չ թե նրանց գեկլարացիաներով ու բանաձեռով, այլ նրանց գործերով:

Պարզ չե՞ արդյոք, վոր յեթե Սլուցկին խկառես ցանկանում եր ստուգել Լենինի ու բոլշևիկների անհաշտությունը գեղագի ցենտրիզմն ունեցած նրանց վերաբերմունքի մեջ, նա իր հոգլածի հիմք պետք է դարձներ վո՛չ թե առանձին վայլերագրերն ու յերկու-յերեք անձնական նամակներ, այլ բոլշևիկների ստուգումը նրանց գործերով, նրանց պատմությամբ, նրանց գործողություններով: Մի՞թե մեղանում, ուստաստանյան սոցիալ-դեմոկրատիայի մեջ, չկային ոսկորտունիստներ, ցենտրիստներ: Մի՞թե բոլշևիկները վճռական ու անհաշտ պայքար չեյին մղում բոլոր այդ հոսանքների գեմ: Մի՞թե այդ հոսանքները թե՛ գաղափարապես, թե՛ կազմակերպողներն կարգած չեյին Արեմուտիքի ուղղութունիստների ու ցենտրիստների հետ: Մի՞թե բոլշևիկները ջարդումիշուր չարին ուղղութունիստներին ու ցենտրիստներին այնպես, ինչպես նրանց ջարդումիշուր չեր արել աշխարհիս վոչ մի ձախ խումբ: Ի՞նչպիս կարելի յե այս ամենից հետո ասել, թե Լենինն ու բոլշևիկները թերապնահատում եյին ցենտրիզմի վտանգը: Ինչո՞ւ Սլուցկին արհամարհեց այս փաստերը, վորոնք վճռողական նշանակություն ունեն բոլշևիկների բնութագրման համար: Ինչո՞ւ նա Լենինին ու բոլշևիկներին նրանց գործերով, նրանց գործողություններով ստուգելու ամենից ավելի հուսալիքիութեալը չոգտագործեց: Ինչո՞ւ նա գերադասեց պատահաբար հավաքած թղթերը փորփելու ավելի պակաս հուսալիք մեթոդ:

Վորովհետեւ բոլշևիկներին նրանց գործերով ստուգելու ավելի հուսալիք մեթոդին դիմելը մի ակնթարթում գլխիվայր չուար Սլուցկու ամբողջ դիրքավորումը:

Վորովհետեւ բոլշևիկներին իրենց գործերով ստուգելը ցույց կտար, վոր բոլշևիկներն աշխարհում միակ հեղափոխական կաղմակերպությունն են, վորը մինչև վերջը ջարդումիշուր արեց

ուղործունիստներին ու ցենտրիստներին և նրանց դուրս վռնուեց կուսակցությունից :

Վորովչետև բոլշևիկների խմական գործերին ու խմական պատմությանը զիմելը ցույց կտար, վոր Սլուցկու ուսուցիչները—տրոցկիստները—այն գլխավոր ու հիմնական խուժքն ենին, վորը Ռուսաստանում ցենտրիզմ եր արմատավորում և դրա համար հանձին Ողոստոսյան բլոկի հասուակ կազմակերպություն եր ստեղծել՝ վորակես ցենտրիզմի ոջախ:

Վորովչետև բոլշևիկներին նրանց գործերով ասուլելը վերջնականապես կմերկացներ Սլուցկուն վորակես մեր կուսակցության պատմությունը խարդախողի, վորը վործում և մինչպատերազմյան ժամանակաշրջանի տրոցկիզմի ցենտրիզմը քողարկել էնինի ու բոլշևիկների գեմ ուղղված զրադարձական մեղադրանքներով, թե իր նրանք թերադնահատել են ցենտրիզմի վատանը:

Ահա թե ինչպես ե, ընկեր խմբագիրներ, Սլուցկու և նրա Հոգվածի բանը:

Դուք տեսնում եք, վոր խմբագրությունու սխալ ե գործել՝ դիսկուսիա թույլատրելով մեր կուսակցության պատմությունը խարդախողի հետ :

Ի՞նչը կարող եր խմբագրությանը մղել դեպի այդ սխալ ուղին: Յես կարծում եմ, վոր նրան դեպի այդ ուղին մղել ե նեխած լիբերալիզմը, վորն այժմ վորոշ չափով տարածված ե բոլշևիկների մի մասի մեջ: Բոլշևիկներից վոմանը կարծում են, թե տրոցկիզմը կոմունիզմի մի ֆրակցիան ե, ճիշտ ե, սխալ վող, քիչ հիմքառություններ չանող, յերբեմն մինչև խմբակուհուդային, բայց և այնպես կոմունիզմի ֆրակցիան: Այսուհետու վորոշ լիբերալիզմ տրոցկիստների ու տրոցկիստորեն մտածող մարդկանց նկատմամբ: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր նման հայացքը տրոցկիզմի նկատմամբ՝ խորապես սխալ ու վնասակար ե: Իրոք տրոցկիզմն արդեն վագուց դադարել և կոմունիզմի ֆրակցիան լինելուց: Իրոք տրոցկիզմն առաջավոր ջոկատան և հակահեղափոխական բուրժուազիայի, վորը պայքար ե աղում կոմունիզմի գեմ, խորհրդային իշխանության գեմ, ԽՍՀՄիությունում սոցիալիզմ կառուցելու գեմ:

Հակահեղափոխական բուրժուազիային ո՞վ տվեց բոլշևիզմի գեմ ուղղված այնպիսի մի հոգեոր գենք, ինչպես այն թեղիսը, թե սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում անհնարին ե, ինչ-



պես այն թեղիաը, թե բոլեկիկների վերասերումն անխուսափելի յե և այն: Այդ զենքը նրան տրոցկիզմը տվեց: Զի կարելի պատահականություն համարել այն փաստը, վոր բոլոր հակախորհը ըրդային խմբավորումները ԽՍՀՄ-ում, խորհրդային իշխանության դեմ պայքարելու անխուսափելիությունը հիմնավորելու վերաբերյալ իրենց փորձերում վկայակոչում եյին տրոցկիզմի հայտնի թեղիաց մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության մասին, խորհրդային իշխանության վերադառնալու հավանականության մասին:

Հակահեղափոխական բուրժուազիային ԽՍՀՄ-ում ո՞վ տվեց տակտիկական գենք՝ խորհրդային իշխանության դեմ ուղղված քացահայտ յելույթների փորձերի ձևով: Այդ զենքը նրան տվին տրոցկիստները, վորոնք փորձում եյին հակախորհրդային ցույցեր սարքել Մոսկվայում ու Լենինգրադում 1927 թվի նոյեմբերի 7-ին: Սա փաստ է, վոր տրոցկիստների հակախորհրդային յելույթները բարձրացրին բուրժուազիայի վողին ու սանձալութեցին բուրժուական մասնագետների վնասարար աշխատանքը:

Հակահեղափոխական բուրժուազիային ո՞վ տվեց կազմակերպական գենք՝ ընդհատակյա հակախորհրդային կազմակերպություններ ստեղծելու փորձերի ձևով: Այդ զենքը նրան տվին տրոցկիստները, վորոնք իրենց սեփական հակարուջեկյան անցեղալ խումբն եյին կազմակերպել: Սա փաստ է, վոր տրոցկիստների ընդհատակյա հակախորհրդային աշխատանքը հեշտացրեց հակախորհրդային խմբավորումների կազմակերպական ձևակլորումը ԽՍՀՄ-ում:

Տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատն է:

Ահա թե ինչու լիբերալիզմը տրոցկիզմի նկատմամբ, թեկուղ ջախջախված ու դիմակալորիած տրոցկիզմի, քայլադյոզություն է, վորը սահմանակցվում է հանցագործության հետ, բանվոր դատակարդին դավաճանելու հետ:

Ահա թե ինչու վորոշ «գրականագետների» ու «պատմագետների» փորձերը՝ մաքսանենգորեն մեր զրականության մեջ ներքաշելու դիմակալորիած տրոցկիստական հնոտին՝ պետք է բոլցելիների կողմից վճռուկան հակահարդածի հանդիպեն:

Ահա թե ինչու չի կարելի տրոցկիստական մաքսանենգորեն հետ դրական դիմակուսիա թույլատրել:

ինձ թվում եւ, վոր տրոցկիստական մաքսանենդների կարգին պատկանող «պատմագետներն» ու «գրականագետները» ջանում են իրենց մաքսանենդ աշխատանքն անցկացնել առայժմ յերկու գծով:

Նախ՝ նրանք աշխատում են ապացուցել, թե Լենինը պատերազմին նախորդած ժամանակաշրջանում թերազնահատում եր ցենտրիզմի վտանգները, ընդումին՝ անփորձ ընթերցողին ե թող-նը վում կուտածել, վոր, հետևաբար, Լենինն այն ժամանակ դեռևս խական հեղափոխական չեր, թե նա այդպիսին դարձավ լոկ պատերազմից հետո, այն բանից հետո, յերբ Տրոցկու ողնությամբ «լեռաղինվեց»: Այս տեսակի մաքսանենդների տիպիկական ներկայացուցիչ կարելի յե համարել Սլուժկուն: Մենք վերևում տեսանք, վոր Սլուցկին և ընկերությունը չարժեն, վոր նրանցով յերկար դրադվենք:

Յերկրորդ՝ նրանք աշխատում են ապացուցել, թե պատերազմին նախորդած ժամանակաշրջանում Լենինը չեր հասկանում բուրժուական-դեմոկրատական հեղափոխության սոցիալիստական հեղափոխության վերաճելու անհրաժեշտությունը, ընդ-ամին, անփորձ ընթերցողին ե թողնվում կուտածել, վոր, հետևաբար, Լենինն այն ժամանակ դեռևս խական բոլցելի չեր, վոր այդպիսի վերաճման անհրաժեշտությունը նա հասկացավ միայն պատերազմից հետո, այն բանից հետո, յերբ նա Տրոցկու ողնությամբ «լեռաղինվեց»: Այս տեսակի մաքսանենդների տիպիկական ներկայացուցիչ կարելի յե համարել «Համկ(բ)կ պատմության դասընթաց»-ի հեղինակ Վոլոսեվիչին: Ճիշտ ե, Լենինը դեռևս 1905 թվին գրում եր, վոր՝ «դեմոկրատական հեղափոխությանից մենք խկույն ևեր կակսենք անցնել, և հենց մեր ուժի համեմատ, զիտակից ու կազմակերպված պրոլետարիատի ուժի համեմատ, կակսենք անցնել սոցիալիստական հեղափոխության», վոր՝ «մենք կողմնակից ենք անընդհատ հեղափոխության», վոր՝ «մենք կանգ չենք առնի կիսանամքին»: Ճիշտ ե, կարելի յեր նման կարգի բաղմարազում փաստեր ու վակերագրեր գտնել Լենինի յերկերում: Բայց Վոլոսեվիչիներն ի՞նչ գործունեն Լենինի կյանքից ու դործունեյությունից առնված փաստերի հետ: Վոլոսեվիչները դրում են, վորպեսդի, բոլցելիյան գույնով ներկվելով՝ իրենց հակալենինյան կոնտրաբանդը ներքաշեն, սուեն բոլցելիների հասցեյին ու խարդախեն բոլցելիյան կուսակցության պատմությունը:

Դուք տեսնում եք, վոր Վոլոսեալիչներն արժեն Սլուցկիներն :

Սրանք են տրոցկիստական մաքսանենդերի «ուղիներն ու ուղեաժանները» :

Ինքներդ հասկանում եք, վոր խմբագրությանդ գործը չեն շտացնել նման «պատմագետների» մաքսանենդային գործունեցությունը՝ դիսկուսիոն տրիբունա տրամադրելով նրանց :

Խմբագրությանդ խնդիրն, ըստիս, այն ե, վոր բոլշևիզմի պատմության հարցերը հասցնեք պատշաճ բարձրության, մեր կուսակցության պատմությունն ուսումնասիրելու գործը դնեք դիտական, բոլշևիկյան ուղևերի վրա և ուշագրությունը սրեք մեր կուսակցության պատմության տրոցկիստական ու ամեն տեսակի այլ խարդախիչների դեմ՝ սիստեմատիկաբար պոկելով նրանց դիմակները :

Սա առավել ևս անհրաժեշտ ե, քանի վոր մինչեւ իսկ մեր միքանի պատմագետները, —յես խոսում եմ անշակերտ պատմագետների մասին, մեր կուսակցության քուշեկյան պատմագետների մասին, —աղասի չեն այնպիսի սխալներից, վորոնք ջուր են լցնում Սլուցկիների ու Վոլոսեալիչների ջրաղացներ։ Այստեղ բացառություն չի կազմում, ցավոք սրտի, նաև ընկ. Յարոսլավսկին, վորի Համեր(բ)կ պատմության վերաբերյալ դրքույկները, չնայած նրանց արժանիքներին, պարունակում են սկզբունքային ու պատմական բնույթի մի շարք սխալներ։

«Пролетарская Революция»,

1931 р. № 6 (113):

Կոմ. քարենվ ի. Ս տ ա լ ի ն

ՀԱՄԿ(Բ)Կ-Ի ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ  
ՇՈՒՐԳԸ

(«Правда», 1987 թ. 6 մայիսի)



«Բոլշևիկ» ժուռնալի 9-րդ համարում զետեղված ե ընկեր Ստալինի նամակը Համկ(բ)Կ պատմության դասագիրք կաղմողներին:

Լենինը և Ստալինը միշտ բացառիկ նշանակություն են տվել Համկ(բ)Կ-ի պատմության բոլշևիկյան ուսումնասիրությանը, յերիտասարդ կուսակցական կադրերի դաստիարակմանը մեր կուսակցության հերոսական պայքարի միորձով։ Նրանք անշեղորեն մերկացրել են մեր կուսակցության բացահայտ և սքովված թըշնամիներին, վորոնք փորձում ելին խեղաթյուրել նրա անցյալը։

Ընկեր Ստալինի ներկա նամակը—«Համկ(բ)Կ-ի պատմության դասագրքի մասին» հսկայական նշանակություն ունեցող մի փաստաթուղթ ե։ Այդաեղ մատնանշված ե այն արմատական թերությունների վերացման ուղին, վորոնցով դեռ տառապում են կուսակցության պատմության դասագրքերն ու դասավանդումը։ Վերացնել այդ թերությունները, դիտական ու սկզբունքային պատշաճ բարձրության հասցնել կուսակցության պատմության ուսումնասիրությունն սուանձնապես անհրաժեշտ ե այժմ, յերբ բոլշևիզմին աթրապետելու խնդիրներն ամբողջ հասակով ծառացած են յուրաքանչյուր կոմունիստի առջե, մեր հայրենիքի բոլոր աշխատավորների առջե։

Ընկեր Ստալինը գրում ե.

«Յես կարծում եմ, վոր Համկ(բ)Կ-ի պատմության մեր դասագրքերն անբավարար են յերեք գլխավոր պատճառներով։ Այս բավարար են կամ այն պատճառով, վոր նրանք Համկ(բ)Կ պատմությունը շարադրում են չկապակցելով յերկրի պատմության հետ, կամ այն պատճառով, վոր սահմանափակվում են պատմելով, պարզապես նկարագրելով հոսանքների պայքարի դեպքերն ու փաստերը, անհրաժեշտ մարքսիստական բացատրություն չտալով, կամ այն պատճառով, վոր տառապում են կառուցվածքի անձատությամբ, դեպքերի պերիոդիզացիայի անձը։

տությամբ։ Այդ թերություններից ազատվելու համար հեղինակները պետք է հաշվի առնեն մի շարք նկատառումներ։

Նախ և առաջ հարկավոր է, վոր դասագրքի յուրաքանչյուր դլիքին (կամ հատվածին) հախորդի պատմական համառոտ տեղեկանք յերկրի տնտեսական ու քաղաքական կացության մասին։ Առանց դրան Համեկ(բ)կ պատմությունը կլինի վոչ թե պատմություն, այլ թեթև ու անհասկանալի պատմվածք անցյալ գործերի մասին։

Յերկրորդ՝ հարկավոր է վոչ միայն շարադրել այն փաստերը, վորոնք ցուցադրում են հոսանքների ու ֆրակցիաների առատությունը կուսակցության և բանվոր դասակարգի մեջ ԽՍՀՄ-ում կապիտալիզմի շրջանում, այլև մարքսիստական բացարձություն տալ այդ փաստերին, մատնանշելով, ա) թե՛ նոր, կապիտալիզմի տեսակետից ժամանակակից դասակարգերի և թե՛ հին, մինչկապիտալիստական դասակարգերի գոյությունը մինչեղափոխական Ռուսաստանում, բ) յերկրի մանր-բուրժուական բնույթը, գ) բանվոր դասակարգի բաղմապիսի կազմը, —վորսկես պայմաններ, վորոնք նպաստում եյին բազմաթիվ հոսանքների ու ֆրակցիաների գոյությանը կուսակցության և բանվոր դասակարգի մեջ։ Առանց դրան Փրակցիաների և հոսանքների առատությունն անհասկանալի յե մնում։

Յերրորդ՝ հարկավոր է հասարակ պատմվածքի տոնով վոչ միայն շարադրել հոսանքների ու ֆրակցիաների կատաղի պայքարի փաստերը, այլև մարքսիստական բացարձություն տալ այդ փաստերին, մատնանշելով, վոր Հակաբոլչեկյան հոսանքների ու ֆրակցիաների գեմ բոլցեկիների մղած պայքարն սկզբունքային պայքար եր լենինիզմի համար, վոր կապիտալիզմի պայմաններում և ընդհանրապես անագոնիստական դասակարգերի գոյության պայմաններում ներկուսակցական հակասությունները և տարածայնություններն անխուսափելի յեն, վոր մատնանշված պայմաններում պրոլետարական կուսակցությունների զարգացումն ու ամբազնդումը կարող է տեղի ունենալ միայն այդ հակասությունների հաղթահարման կարդով, վոր առանց սկզբունքային պայքար մղելու հակալենինյան հոսանքների ու խմբերի գեմ, առանց դրանք հաղթահարելու, մեր կուսակցությունն անխուսափելուրեն կայլասերվեր, ինչպես այլասերվեցին Ա Ինտերնացիոնի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, վորոնք այդ պիսի պայքար չեն ընդունում։ Կարելի յեր այս դեպքում ոգտա-

գործել 1882 թվականին Ենթելսի կողմից Բերնշտայնին բերված հայոնի նամակը, վոր բերված և Կոմինուերնի Գործադիր Կոմիտեի վեջում ԱՀ ընդլայնած աղենումում իմ տված զեկուցման մեջ. «Սոցիալ-դեմոկրատական թերման մասին» Համբկ(բ)կ մեջ և իմ մեկնարանություններն այդ առթիվ: Առանց այլպիսի բացարձությունների, Փրակցիաների ու հոսանքների սլայքարը Համբկ(բ)կ պատմության մեջ կթողնի անհասկանալի խառնակչության տպավորություն, իսկ բոլշևիկները կթողնեն անուղղելի և անհանգիստ խառնակիցների ու կովարարների տպավորություն:

Հարկավոր ե, վերջապես, վորեւ կարգ ու կանոն մացնել Համբկ(բ)կ պատմության դեպքերի ողերիողիզայի գործում:

Յես կարծում եմ, վոր ստորև բերված կամ դրա նման սիեմա կարող եր հիմք կաղմել:

## Ս Խ Ե Մ Ա

### I

Պայքար Ռուսաստանում մարքսիստական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն ստեղծելու համար:

(1883 թ. Պ. Պլեխանովյան «Աշխատանքի ազատադրման խմբակի» կազմվելուց մինչև «Իսկրա»-յի առաջին համարները՝ լույս տեսնելը՝ 1900—1901 թ.թ.):

### II

Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության կազմվելը և կուսակցության ներսում բոլշևիկների ու մենշևիկների Փրակցիաների յերկան գալը:

(1901—1904 թ.թ.):

### III

Մենշևիկները և բոլշևիկները ռուս-նայոնական պատերազմի և ռուսական առաջին հեղափոխության շրջանում:

(1904—1907 թ.թ.):

### IV

Մենշևիկները և բոլշևիկները Ստոլիպինյան ռեակցիայի շրջանում և բոլշևիկների ձևավորումը, վորպես ինքնուրույթ Սոց-Դեմ. Բանկ. կուսակցություն:

(1908—1912 թ.թ.):

## V

Բոլշևիկների կուսակցությունը բանվորական շարժման վե-  
րելքի տարիներին՝ առաջին իմայերիալիստական պատերազմից ա-  
ռաջ:

(1912—1914 թ.թ.):

## VI

Բոլշևիկների կուսակցությունն իմայերիալիստական պատե-  
րազմի և ռուսական յերկրորդ՝ Փետրվարյան հեղափոխության  
շրջանում:

(1914 մարտ—1917 թ.թ.):

## VII

Բոլշևիկների կուսակցությունը Հոկտեմբերյան սոցիալիս-  
տական հեղափոխության նախապատրաստման ու իրականացման  
շրջանում:

(1917 սուրի—1918 թ.թ.):

## VIII

Բոլշևիկների կուսակցությունը Ժաղաքացիական պատերազմի  
շրջանում:

(1918—1920 թ.թ.):

## IX

Բոլշևիկների կուսակցությունը ժողովրդական տնտեսության  
վերականգնման խաղաղ աշխատանքին անցնելու շրջանում:

(1921—1925 թ.թ.):

## X

Բոլշևիկների կուսակցությունը յերկրի սոցիալիստական ին-  
դուստրացման համար մղվող պայքարում:

(1926—1929 թ.թ.):

## XI

Բոլշևիկների կուսակցությունը գյուղատնտեսության կուեկ-  
տիվացման համար մղվող պայքարում:

(1930—1934 թ.թ.):

## XII

Բոլշևիկների կուսակցությունը սոցիալիստական հասարակու-

թյան կառուցումն ավարտելու և նոր Սահմանադրության անցկացնելու համար մղվող պայքարում:

(1935—1937 թ.թ.):

ի. Ս ա ռ կ ն »:

\* \*

Էնկեր Ստալինի նամակը կոմունիստների ամբողջ մասսային զինուած և հատակ և կոնկրետ ցուցումներով: Նա բանալի յէ տալիս վճռաբար բարելավելու կուսակցության պատմության ուսումնասիրությունը, վորը հոկայական տեղ և դրավում բոլշևիդմին տիրապետելու ամբողջ սիստեմում: Վերցնելով ամենաարմատական, հանգուցային հարցերը, բնկեր Ստալինը ցույց է տալիս, թե ինչպես պետք է դրված լինի մեր կուսակցության կուտակած առենահարուստ փորձի խկական յուրացումը:

Զի կաքելի կուսակցության պատմությունը վերցնել անկախ յերկրի պատմությունից: Այս կամ այն շրջանի քաղաքական ուժնետեսական ընդհանուր կացությունից կտրվելն անհասկանալի յէ դարձնում բոլշևիզմի պատմության դեպքերը ժամանակակից ունկնդրի կամ ընթերցողի համար: Ուստի ընկեր Ստալինն առաջարկում է դասագրքի յուրաքանչյուր մասին (գլխին կամ հատվածին) կցել պատմական համառոտ տեղեկանք յերկրի անտեսական ու քաղաքական վիճակի մասին:

Բոլշևիզմի պատմությունը շարադրելիս չի կարելի սահմանափակվել միմիայն դեպքերի նկարագրությամբ, անհրաժեշտ և վաստերի մարքսիստական վերլուծությունը, բացատրությունը տալ: Այդ վերլուծման բացակայությունը մակերեսույթին և անհամողիչ և դարձնում ամբողջ շարադրանքը: Վերջին հաշվով այդ ձեռնաու յէ կուսակցության թշնամիներին, վորոնք հնուց ի վեր դրանեւ յէ կուսակցության թշնամիներին, վորոնք հնուց ի վեր դրանեւ ու անհաշտ մարդիկ: Թշնամիների այդ դրանքությունը փուլ և դալիս, չենց վոր դեպչում և դեպքերի մարքսիստական, խկական գիտական բացատրության գենքին:

Մարքսիստական վերլուծությունը հասկանալի յէ դարձնում ֆրակցիաների և հոսանքների առատությունը կուսակցության և բանվոր դասակարգի մեջ, ցույց տալով դրանց սնունդ տվող հողը, մինչեղափոխական Ռուսաստանի դասակարգային կազմի յուրատեսակությունը, յերկրի ժանր-բուրժուական բնույթը, պրոլետարիատի բազմատեսակ կազմը: Մարքսիստական բացատրության գենքին:

տրությունը հասկանալի յե պարձնում, թե ինչու անհրաժեշտ և անխուսափելի յե յեղել բոլցելիների անհաշտ պայքարը հանուն լենինիզմի անդարսության, ընդուամ նրա բոլոր և ամեն տեսակ բացահայտ ու դիմակալվորված հակառակորդների: Մեր կուսակցության պայքարը միշտ յեղել ու մնում և սկզբունքային պայքար, պայքար հանուն ամենավեհ նպատակների, վորոնք յերբեք վիցե դրված են յեղել մարդկության առջև:

Կուսակցությունը կենդանի որդանիզմ է: Նա ապրում ու զարգանում և վորոշ իրադրության մեջ: Այդ իրադրության հակառակությունները, քանի դեռ կենդանի յե կապիտալիզմը, քանի դեռ չեն վոչնչացվել անտարդոնիստական դասակարգելը, չեն կարող իրենց արտացոլումը չգտնել կուսակցության կյանքում: Ընդհանրացնելով միջադրային բանմուրական շարժման վիճիմարի փորձը, կենինը և Ստալինը շատ անդամ ամենայն պարզորոշությամբ ցույց են տվել, վոր պայքարի միջոցով ներկուսակցական հակառակությունների հաղթահարումը պրոլետարական կուսակցության կյանքի որենքն ե, յեթե նա չի ուղղում այլասերվել, ինչպես այլասերվեցին Անտերնացիոնալի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները: Կենինը և Ստալին ընդունին հենվում ելին գիտական կոմունիզմի հիմնադիրների արտահայտած մտքերի վրա:

1926 թ. դեկտեմբերին Կոմինտերնի Գործկոմի VII ընդլայնած պլենումում իր տված զեկուցման մեջ ընկեր Ստալինը հետեւյալ քաղվածքը բերեց Ենգելսի 1882 թ. Յերնշտայնին զբած համակեց (այն ժամանակ Բերնշտայնը գեր հեղափոխական մարքաբատ եր, Ենգելսն աշխույժ համակարգություն ուներ նրա հետ քաղաքական կարեռագույն հարցերի շուրջը):

«Ինչպես յերեսում ե, մեծ յերկրի ամեն մի բանվորական կուսակցություն կարող և զարգանալ միայն ներքին պայքարում, ինուն համապատասխան զիալեկտիկական զարգացման որենքներին: Գերմանական կուսակցությունը գարձալ այն, ինչ վոր և այլենախցիների և լաստականների պայքարում, վորտեղ հենց ինքը բաղխումը գլխավոր դեր եր խաղում: Միասնությունը հնարավոր զարձալ միայն այն ժամանակ, յերբ լաստալի կողմից դիտավորյալ կերպով վորսես դործիք սնուցված խաժամուժը մաշվեց, և այստեղ այդ տեղի ունեցալ մեր կողմից շատ մեծ հաղթեպությամբ: Ֆրանսիայում այն մարդիկ, վորոնք թեպիտել դոհաբերեցին բակունիստական թերթիաները, բայց շաբունակում

Են պայքարի բակունիստական մեթոդներով գործել և միևնույն ժամանակ ցանկանում են շարժման դաստիարակային բնույթն իրենց սոցիալական նախատակներին զոհաբերել, նույնպես պետք է առաջ մաշվեն, նախագան նորից հնարավոր կղառնա միասնությունը : Այդպիսի պայմաններում միասնություն քարոզելու ցանկությունը բացարձակ հիմարություն կլիներ : Բարոյախոսական քարոզներով չի կարելի կանխել այն մանկական հիվանդությունները, վորոնցով պետք է հիվանդանալ արդի պայմաններում»<sup>1</sup>:

Հենց այդտեղ ել ընկեր Ստալինը մեջ բերեց Ենգելսի մի այլ նման ցուցումը, վոր վերաբերում է 1885 թվին .

«Հակասությունները յերբեք չեն կարելի յերկար ժամանակ կոծկել, նրանք լուծվում են պայքարով»<sup>2</sup>:

Հանդես դալով յեղբայրական կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչների առջև, ընկեր Ստալինը տվեց Համկ(բ)կ զարդացման պատմության մեջ գոյություն ունեցած ներկուսակցական պայքարի ամենասուր մոմենտների բացառիկ բովանդակալից համառոտ ուրվագիծը : Նա ասաց .

«Յեթե վերցնենք մեր կուսակցության պատմությունն այն մոմենտից, յերբ նա ծնունդ առավ 1903 թ., վորպես բոլշևիկների մի խումբ, և հետեւնք նրա հաջորդ ետապներին կիպ մինչև մեր ժամանակները, առաջ կարելի յե առանց չափազանցության ասել, վոր մեր կուսակցության պատմությունն այդ կուսակցության ներսում յեղած հակասությունների պայքարի պատմությունն ե, այդ հակասությունները հաղթահարելու և մեր կուսակցությունն այդ հակասությունների հաղթահարման հիման վրա աստիճանաբար ամրապնդելու պատմությունը»<sup>3</sup> :

Դեն շպրտելով ներկուսակցական պայքարի քաղքենիական «բացատրությունը» բոլշևիկների հասուվկ «կովարարությամբ», ընկեր Ստալինը խորը մարքսիստական բացարություն և տալիս այն պատճառներին, վորոնց չնորհիվ պրոլետարական կուսակցության զարդացումն ու ամրացումը կարող ե ընթանալ միմիայն ներկուսակցական հակասությունների հաղթահարման ճանապարհով, հակակուսակցական հոսանքների ու խմբակների դեմ կտաղի պայքար մղելու ճանապարհով : Նա ասում ե.

1 Ստալին. Ռպողիցիոյի մասին, էջ 443, ՊԱՅ, 1928 թ.:

2 Նույն տեղ:

3 Նույն տեղ, էջ 439:

«Այսուեղ բանն այն է, վոր հակասությունները կարելի յեւ հաղթահարել միայն այս կամ այն սկզբունքների համար պայքարելով, պայքարի այս կամ այն նպատակների համար պայքարելով, դեսպի նպատակը տանող պայքարի այս կամ այն մեթոդների համար պայքարելու միջոցով։ Կարելի յեւ և պետք է կուսակցության ներսում այլ կերպ մտածողների հետ ընթացիկ քաղաքականության հարցերի շուրջը, դուռ գործնական բնույթի հարցերի շուրջն ամեն տեսակ համաձայնության դալ։ Բայց յեթե այդ հարցերը կարգած են սկզբունքային տարածայնությունների հետ, ապա վոչ մի համաձայնություն, վոչ մի «միջին» գիծ չի կարող փրկել դորձը։ Զկա և չի կարող լինել «միջին» գիծ սկզբունքային բնույթ կրող հարցերում։ Կամ այս, կամ այն սկզբունքները պետք է դրված լինեն կուսակցության աշխատանքի հիմքում։ «Միջին» գիծն սկզբունքային հարցերում զլուխներն աղբոտելու «դիմ» է, տարածայնություններն սքողելու «դիմ», կուսակցության գաղափարական վերասերման «դիմ», կուսակցության խղեսական մահվան «դիմ»։

Այսուհետեւ, վերլուծելով կուսակցության ներսը յեզած հակասությունների և տարածայնությունների աղբյուրները, վորոնք են՝ մի կողմից բուրժուազիայի և բուրժուական իզերոգիայի ճնշումը պրոլետարիատի և նրա կուսակցության վրա՝ դասակարգերի պայքարի պայմաններում և, մյուս կողմից, բանվար դասակարգի բազմապիսությունը, նրա ներսում տարբեր խավերի գոյությունը, ընկեր Ստալինը հետեւցնում է.

«Կարելի՞ յեւ արդյոք խուսափել այդ հակասություններից և տարածայնություններից։ Վո՛չ, չի կարելի։ Կարել, թե կարելի յեւ խուսափել այդ հակասություններից, նշանակում է խարել իրեն։ Ենդեմն իրավացի յեր, յերը ասում էր, թե հնարավոր չեւ յերկար ժամանակ կոծկել կուսակցության ներսի հակասությունները, թե այդ հակասությունները լուծվում են պայքարով»<sup>1</sup>։

Հենց այդպես պետք է կառուցել Համկ(բ)կ պատմության դասագիրքը, հենց այդպես պետք է ուսումնասիրել կուսակցության պատմությունը։

Վերջապես, չի կարելի կամայականորեն շրջանների բաժանել կուսակցության պատմությունը։ Գոյություն ունեցող դասագրերն այդ կողմից աչքի յեն ընկնում մեծ տարազարկությամբ։

<sup>1</sup> Ստալին, Առողջիւթայի մասին, հջ 445, 1928 թ.։

Այսպես, Ն. Պողովի դասագիրքը բաժանվում է 16 գլխի կամ շրջանների, Վ. Կնորինի խմբագրությամբ լույս տեսած դասագիրքը՝ 16 շրջանների, վորոնք բնավ չեն դրագաղիպում Ն. Պողովի դասագրքի շրջաններին։ Յեւ Յարոսլավսկու դասագիրքը բաղկացած է ամելի քան 20 գլխից։ Այսինչ կուսակցության պատմության խկական դիտական պերիոդիզացիան հոկայական նշանակություն ունի։ Առանց դրան չի կարելի վո՛չ սիստեմի վերածել նյութը, վո՛չ ել ճիշտ բացարել դեպքերը։ Ընկեր Ստալինի ցուցումները կարդ են մտցնում պերիոդիզացիայի դործում։ Նրա ուրվագծած սիստեմ տալիս է բոլշևիզմի պատմության հոտակ բաժանումներ առանձին ետապների, վորոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է վորոշ աստիճան մեր կուսակցության ընդհանուր գարգացման մեջ։

Վերջնենք, որինակ, առաջին չորս բաժինը։ Նրանք պարզ ու վորոշակի առանձին ետապների յեն բաժանում մեր կուսակցության անցած ճանապարհի մի հոկայական հատվածը։ Այդ ետապներից յուրաքանչյուրի անունը բնորոշում է նրա բուն եյությունը։ Հենց անունները սպառիչ պարզորոշություն են մտցնում այն հարցերի մեջ, վորոնց չուրջը բավականաչափ խառնաշխոթություն և կուտակվել։ Բոլշևիկները մի շարք տարիների ընթացքում անհաջող պայքար են մղել մենշևիկների գեմ, ձևականորեն մեալով մի կուսակցության շրջանակներում, բացի III համագումարին հաջորդած վորոշ ժամանակաշրջանից։ Պրագայի 1912 թ. կոնֆերենցիան, խղելով կազմակերպական տեսն տեսակ կապերը մենշևիկների հետ, բոլշևիկյան կուսակցության ինքնուրույն գոյության ոկիցքը դրեց։


Բնական եւ, վոր Պրագայի կոնֆերենցիան բոլորում և բոլշևիզմի պատմության մի շրջանը և սկսում է մյուսը։ Հաջորդ (V) շրջանը—բոլշևիկների կուսակցությունը բանվորական շարժման վերելքի տարիներին՝ առաջին խմբերի իստական պատերազմից առաջ—ընդգրկում է Պրագայի կոնֆերենցիային հաջորդող նախապատերազմյան տարիները։

Նույնպիսի պարզորոշություն ու հստակություն մտցեց ընկեր Ստալինի սիստեմ կուսակցության պատմության հաջորդ տարիների, վորոնց թվում նաև սոցիալիստական Մեծ Հեղափոխությանը հաջորդող տարիների՝ պերիոդիզացիայի մեջ։ Կուտությանը հաջորդող տարիների՝ պերիոդիզացիայի մեջ։ Կուտությանը հաջորդող տարացած համաշխարհային պատմական հիմնական ինդիքտության առջև ծառացած համաշխարհային պատմական հիմնական ինդիքտության առջև աշխարհում—ահա թե ինչն

Ե գը՞ւած Համկ(բ)կ պատմության հետհոկտեմբերյան շրջանի բաժանման հիմքում։ Այդ ժամանակաշրջանն ուսումնասիրեցիս ել անհրաժեշտ ե ամենալրիվ կերպով ցույց տալ այն համառ ու վճռական պայքարի պատկերը, վոր կուսակցությունը մղել ե տրոցկիստների դեմ, աջ ուղղումնիստների ու այն հակակուսակցական խմբավորումների դեմ, վորոնք բոլշևիզմի դեմ մղած իրենց պայքարի ընթացքում դարձան սոցիալիզմի վոխերիմ թըշնամիները, մեր հայրենիքի դավաճանները, լրտեսներն ու դիվերսանտներ։

Ընկեր Ստալինի կողմից Համկ(բ)կ պատմության դասագիրքը կազմողներին ուղղված նամակը հսկայական դեր ե խաղաղու կուսակցության պատմության դասավանդումը և ամբողջ բոլշևիկյան պրոպագանդան ճիշտ հիմքի վրա դնելու գործում։ Այդ նամակին առձեռն փաստաթուղթ ե բոլոր դասաստունների, պրոպագանդիստների և բոլշևիզմի պատմությունն ուսումնասիրող բոլոր ընկերների համար։

«Պրաձա» 6 մայիսի 1937 թ.



Թարգմ. Ա. Բարյան  
Խմբ. Գ. Շազգանյան  
Տեխն. խմբ. Ա. Խաչուտրյան  
Մրբագրիչ Վ. Զիգեզյան  
Կոնսորտ սրբագրիչ Լ. Արովյան

---

Գլավիստ լիազոր Գ-9710  
Հրատ. № 472, պատվիր № 133  
Տրըաժ 15000, ինդեքս ԱՌԱ  
PK

Հանձնված ե արտադրության 14/VII 1937 թ.  
Ստորագրված ե ապագրիլու 21/VIII 1937 թ.  
Գինը 30 կ.

Հայկուսհրատի տպարան, Եկեղեց  
Ալավերդյան 71

Պրօց. 1940 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0021338

440

ЦЕНА

A II  
6809

-034пнц-

916 204.

И. СТАЛИН  
О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ  
ИСТОРИИ БОЛЬШЕВИЗМА  

---

К ИЗУЧЕНИЮ ИСТОРИИ ВКП(б)  
Армвартиздат, Ереван, 1937 г.